

*Շրջակա միջավայրի նախարարության*

*«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

-----------------------------------------------------------------------------------------------------------

*ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ*

*ՏԵՂԵԿԱԳԻՐ*

*2024*

-----------------------------------------------------------------------------------------------------------

*Սեպտեմբերի երրորդ տասնօրյակ*

*Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:*

*Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան*

## *ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

*Սեպտեմբերի երրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում եղել է նորմայի սահմաններում մի փոքր բացասական շեղումով:*




*Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են սեպտեմբերի 25-ին. Տավուշում գրանցվել է +26…+28$^0$C (Դիլիջան՝ +21$^0$C), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +19…+21$^0$C, նախալեռնային շրջաններում՝ +25…+27$^0$C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +28…+30$^0$C, նախալեռնային շրջաններում՝ +21…+23$^0$C, Շիրակում՝ +18…+23$^0$C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +18…+21$^0$C, նախալեռնային շրջաններում՝ +22…+24$^0$C, Գեղարքունիքում՝ +18…+22$^0$C (Սեմյոնովկա՝ +15$^0$C), Լոռիում՝ +21…+23$^0$C, Արմավիրում, Արարատում՝ +28…+30$^0$C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +16…+18$^0$C, նախալեռներում՝ +22…+27$^0$C:*

*Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են սեպտեմբերի 30-ին. Տավուշում գրանցվել է +3…+7$^0$C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ -1…+1$^0$C, նախալեռնային շրջաններում՝ +5…+7$^0$C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +7…+11$^0$C, նախալեռնային շրջաններում 0…-4$^0$C (Գորիս՝ +3$^0$C), Շիրակում՝ +1…+4$^0$C (Աշոցք -1$^0$C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ -2…+3$^0$C, նախալեռնային շրջաններում՝ +7…+9$^0$C, Գեղարքունիքում՝ -2…+1$^0$C (Շորժա՝ +4$^0$C), Լոռիում՝ 0…+5$^0$C, Արմավիրում՝ +5…+10$^0$C, Արարատում՝ +6…+8$^0$C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 0…-1$^0$C, նախալեռներում՝ +5…+8$^0$C:*




*Տասնօրյակային տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 15-20մմ (135-238%), Լոռիում՝ 4-13մմ (26-69%), Տավուշում՝ 4-15մմ (30-90%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 10-14մմ (72-79%), նախալեռներում՝ 6-16մմ (82-143%), Գեղարքունիքում՝ 4-38մմ (36-311%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 14-28մմ (87-255%), նախալեռնային շրջաններում՝ 12մմ (125%), Արմավիրում՝ 6-13մմ (107-200%), Արարատում՝ 2-4մմ (39-77%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 7մմ (48%), նախալեռնային շրջաններում՝ 5մմ (167%), Սյունիքի հովտային շրջաններում՝ 7-22մմ (183-121%), նախալեռնային շրջաններում՝ 7-29մմ (69-139%):*




*Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են լեռնային շրջաններում՝ -3...+2$^0$C (Գավառում, Սիսիանում՝ -5$^0$C), Արարատյան դաշտում, Արագածոտնի նախալեռներում, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ +2....+7$^0$C:*

***Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ փարվա և բազմամյա միջինի համեմատ***

***Գյուղատնտեսական մշակաբույսերի աճն ու զարգացումը***

*Տասնօրյակի ընթացքում շարունակվել է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքահավաքը: Դաշտերում և այգիներում կատարվել է հերթական վեգետացիոն և սնուցող ոռոգում:*

*Հանրապետությունում կատարվել է պտղատուների, խաղողի, բանջարանոցային մշակաբույսերի, կարտոֆիլի, կաղամբի, եգիպտացորենի, ձմերուկի բերքահավաք:*

*Լեռնային շրջաններում շարունակվել է աշնանացան ցորենի ցանքը, տեղ-տեղ հատիկը կտցել է, նախալեռներում սկսվել է նախացանքային աշխատանքները:*

:

